ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

«ՀԱՄԱԶԱՐԿ» ԿՈԱԼԻՑԻԱՅԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՊԼԱՆԻ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԵՎԱՆ 2019թ

Կառուցվածք

Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (ղեկավար կազմակերպություն), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Հայաստանի համայնքների միության, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի, ինչպես նաև «Ագորա Սենթրալ Յուրըփ» չեխական ՀԿ-ի համատեղ կոնսորցիումով իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում իրականացվող «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի շրջանակներում ստեղծված «ՀամաԶարԿ» («Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման միավորում») ՔՀԿ կոալիցիայի (համա)ֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. *Ներածություն*
2. *Ծրագրի մասին*
3. *«Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստեղծված «ՀամաԶարԿ» («Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման միավորում») ՔՀԿ կոալիցիայի համաֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման գործողությունների և միջոցառումների ծրագիր*
4. *Միջոցառումների և գործողությունների ծրագիր*
5. *Հնարավոր դոնոր կազմակերպությունների նախնական ցանկ*
6. *Ամփոփում*
7. *Լրացուցիչ*
8. *«Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի Կոնսորցիումի անդամ կազմակերպությունների կոնտակտային տվյալներ*

1. Ներածություն

Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (ղեկավար կազմակերպություն), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Հայաստանի համայնքների միության, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի, ինչպես նաև «Ագորա Սենթրալ Յուրըփ» չեխական ՀԿ-ի համատեղ կոնսորցիումով իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում իրականացվող «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի շրջանակներում ստեղծված «ՀամաԶարԿ» («Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման միավորում») ՔՀԿ կոալիցիայի (համա)ֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը հանդիսանում է ծրագրի կարևորագույն փաստաթղթերից մեկը, որի իրականացման միջոցով նախատեսվում է ապահովել Ծրագրի 10 տոկոս համաֆինանսավորումը:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է *24.986.000* ՀՀ դրամ, որից «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրից հայցվում է *22.487.000* ՀՀ դրամ, իսկ դիմողի ֆինանսական ներդրման չափը *2.498.600* ՀՀ դրամ է, որը կազմում է ծրագրի ընդհանուր արժեքի 10 տոկոսը նախատեսվում է ապահովել Կոնսորցիումի անդամներիների և այլ աղբյուրների համաֆինանսավորման տեսքով:

Ծրագրի կոալիցիայի համաֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը քննարկվելու է Ծրագիրը իրականացնող կազմակերպությունների կոնսորցիումի, Ծրագրի աշխատակազմի անդամների, ինչպես նաև Կոալիցիայի անդամների հետ, որից հետո կներառվեն բոլոր կարծիքները, առաջարկություններն ու դիտողությունները: Վերջնականացնելուց հետո պլանը կներկայացվի «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվող կոնսորցիումին՝ այն քննարկելու համար:

Ծրագրի կոալիցիայի համաֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը վերանայվում է յուրաքանչյուր 4 (չորս) ամիսը մեկ անգամ, կամ ըստ անհրաժեշտության ավելի կարճ ժամկետներում:

2. Ծրագրի մասին

2018 թվականի ապրիլ ամսին Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի (ղեկավար կազմակերպություն), Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Հայաստանի համայնքների միության, «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի, ինչպես նաև «Ագորա Սենթրալ Յուրըփ» չեխական ՀԿ-ի համատեղ կոնսորցիումով իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրիրը Հայաստանի ՔՀԿ-ների համար հայտարարել էր ծրագրի շրջանակներում ծրագրային 9 թիրախ ոլորտներում ՔՀԿ-ների կոալիցիաների (ցանցերի) համար հանրային քաղաքականությունների բարելավման, ջատագովության և մշտադիտարկման ենթադրամաշնորհների մրցույթ:

«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ն «ՀամաԶարԿ» («Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման») ՔՀԿ կոալիցիայի, իր գործընկերներ «ՀԿ Կենտրոն», «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ, «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ հետ համատեղ կոնսորցիումով «*Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» (“Participatory Monitoring for the Creation of Smart Communities in Armenia”)* անվանումով ծրագրային հայտ են (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացրել նշված ենթադրամաշնորհային մրցույթի *«Տնտեսություն»* ոլորտին և հաղթել են: Ծրագրի իրականացումը ղեկավարվում է «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ կողմից:

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերում ընտրված խոշորացված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը՝ ոլորտի հանրային քաղաքականության բարելավման, մոնիթորինգի իրականացման և ջատագովության միջոցով:

Ծրագրի իրականացման տարածքային ծածկույթն ընդգրկում է ՀՀ երեք մարզերը՝ Շիրակը, Լոռին և Տավուշը: Երեք մարզերից ընդգրկվել են Ախուրյան և Աշոցք, Ստեփանավան և Թումանյան, Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքները: Ծրագրային մի քանի գործողություններ իրականացվելու են նաև Երևան քաղաքում՝ կապված ծրագրի փորձագիտական և տեխնիկական աջակցության հետ:

Ծրագրի իրականացման անհրաժեշտությունը բխում է ոլորտում առկա մի շարք խնդիրներից ինչպիսիք են՝ ա) ՔՀԿ-ների մասնակցության մեխանիզմների թույլ մակարդակ տեղական աճի ռազմավարություններում և «խելացի համայնք» նախաձեռնություններում, այդ ռազմավարությունների և նախաձեռնությունների բարելավման, ջատագովության, մշտադիտարկման և դրանցում ՔՀԿ-ների ավելի մեծ ներգրավվածության ապահովման անհրաժեշտությունը: բ) Տեղական տնտեսական զարգացման պլանների հաջող իրականացման բարելավման և մշտադիտարկման անհրաժեշտությունը: գ) ՏԻՄ-երում հանրային կառավարման բարեփոխումների բարելավման, մշտադիտարկման և ջատագովության անհրաժշտությունը: Այս խնդիրների լուծման համար կարիք կա ուսումնասիրել, վերլուծել և գնահատել աղբահանության, լուսավորության և կոմունալ ծառայությունների ոլորտը, բացահայտել առկա խնդիրները, մշակել և ՏԻՄ-ին ներկայացնել խնդիրների այլընտրանքային լուծման առաջարկությունների փաթեթ՝ մշակված բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Անհրաժեշտ է նաև մշակել թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմներ, որոնք կնպաստեն ծրագրի իրականացման ոլորտում կառավարման գործընթացների համակարգային փոփոխություններին: Մեխանիզմները մշակվելու են «ՀամաԶարԿ» («Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման միավորում») ՔՀԿ կոալիցիայի հենքի վրա:

Ծրագրի առանձնահատուկ նպատակներն են.

- Բացահայտել երեք մարզերի թիրախային 6 համայնքապետարանների կողմից ներհամայնքային ճանապարհների և փողոցների պահպանության, շահագործման և նորոգման, Աղբահանություն և սանիտարական մաքրման և Ներհամայնքային փողոցների լուսավորության ոլորտներում մատուցվող ծառայությունների արդյունավետության վերաբերյալ բնակչության գնահատականը,
- Վերլուծել թիրախ համայնքների բյուջետային միջոցների արդյունավետությունը մասնակցային մոնիթորինգի միջոցով,
- Աջակցել թիրախ համայնքապետարանների կողմից մատուցվող հանրային ծառայությունների առավել արդյունավետ մեխանիզմների նեդրմանը,
- Բարձրացնել բնակչության մասնակցությունը հանրային կառավարման ոլորտում՝ ապահովելով բարեփոխումների արդյունավետ իրականացումը:

Ծրագրի մշակման համար հիմք է հանդիսացել քաղաքականությունների ձևավորման և մշտադիտարկման ոլորտում Կոնսորցիումի հավաքական փորձի օգտագործման և կոալիցիա ստեղծելու անհրաժեշտությունը:

Ծրագրի համախոհներն են հանրապետական և մարզային մակարդակով գործունեություն ծավալող ՔՀԿ-ները, թիրախ ոլորտներում պետական և տեղական մարմինները: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

Ծրագրի թիրախ *«տնտեսություն»* ոլորտում նպատակներն իրականացվելու են հետևյալ գործողությունների միջոցով.

1) Աշխատանքային խմբի ստեղծում, ծրագրի մեկնարկի մասին մամուլի ասուլիսի կազմակերպում
2) Քաղաքացի-մոնիթորների վերապատրաստում
3) 3 մարզերի 6 համայնքների բնակիչների շրջանում հարցումների անցկացում և արդյունքների վերլուծություն
4) Տվյալների հարցում ՏԻՄ-երից
5) Կոալիցիայի ստեղխում
6) «Town Hall» ձևաչափով քննարկումների անցկացում 3 մարզերում
7) «Chatham House» ձևաչափով փորձագիտական մեկ աշխատաժողովի անցկացում Գյումրիում
8) Մասնակցային մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ համախպարփակ զեկույցի հրապարակում
9) Ընտրված 6 համայնքների պաշտոնական կայքերում նոր բաժնի ստեղծում
10) Ծրագրի արդյունքների ջատագովում, տարածում, շահերի պաշտպանություն
11) Ծրագրի ամփոփում, ամփոփիչ միջոցառման կազմակերպում:

Կոնսորցիումի ու դրամաշնորհատու կառույցի ներկայացուցիչները կքննարկեն և աշխատանքային խմբին կներկայացնեն ծրագրի ***կայունության ապահովման*** հերթական առաջարկություններն ու քայլերը:

Ծրագրային գործողությունները լուսաբանվում են Կոնսորցիումի անդամ կառույցների ֆեյսբուքյան էջերի, կայքէջերի, «ՀամաԶարԿ» կոալիցիայի ֆեյսբուքյան էջի և կայքէջի, «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի կայքի, Իրավաբան.net անկախ լրատվական կայքի և այլ ԶԼՄ-ների կողմից:

Ծրագիրը մեկնարկվել է 2018 թվականի հունիսին՝ 12 ամիս տևողությամբ:

Ծրագրի շրջանակներում որպես թիրախային ոլորտ ընտրված է տնտեսության, ոլորտը:

3. «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում տրամադրված «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստեղծված «ՀամաԶարԿ» («Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման») ՔՀԿ կոալիցիայի համաֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման միջոցառումների և գործողությունների ծրագիր

Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում տրամադրված «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստեղծված «ՀամաԶարԿ» («Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման») ՔՀԿ կոալիցիայի համաֆինանսավորման 10 տոկոս գումարն ապահովելու և ծրագրային որոշ գործողությունները ապահովելու նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ներգավելու նպատակով կազմվել է հնարավոր դոնոր կազմակերպությունների ***նախնական ցանկ*** և ***միջոցառումների ու գործողությունների նախագիծ***, որոնք պետք է քննարկվեն:

Ցանկում ընդգրկվել են Հայաստանում և արտասահմանյան երկրներում գործող միջազգային դոնոր կազմակերպություններ, արտասահմանյան երկրների խոշոր հիմնադրամներ, ինչպես նաև ոլորտում ակտիվ ֆինանսավորող կազմակերպություններ, որոնք գործունեություն են ծավալում Անդրկովկասյան տարածաշրջանում կամ Հայաստանում և հետաքրքրված են համագործակցել տեղական կազմակերպությունների հետ, ցանկանում են իրականացնել համատեղ ծրագրեր կամ ֆինանսավորել այլ իրականացվող ծրագրերի բաղադրիչներ: Ցանկը պարբերաբար թարմացվելու և ավելացվելու է: (National Science Foundation,Robert, Wood Johnson Foundation, EASME, European Commission):

Կապ է հաստատվելու համանման ծրագրեր իրականացնող գործող կոալիցիաների և կոնսորցիումների հետ, որոնք կհետաքրքրվեն «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի գործողությունների իրականացմամբ: (Swiss Cooperation Office in Armenia, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ, Վիշեգրադյան հիմնադրամ, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, EBRD):

Այս նպատակով կարելի է օգտագործել նաև Հայկական սփյուռքի ընձեռած հնարավորությունները: Ներկայումս սփյուռքի ներկայացուցիչները հակված են անմիջականորեն աշխատել հասարակական կազմակերպությունների հետ որոշակի ֆինանսական օժանդակություն հատկացնելով ՔՀԿ-ներին ժողովրդավարական արժեքները զարգացնելու և ամրապնդելու, ինչպես նաև

քաղաքականությունների ձևավորման, հանրային վերահսկողության, ՔԿՀ-ների մասնակցությունն ու ներգրավվածությունը կառավարության գործունեության համապատասխան ոլորտներում ՔՀԿ-ների և ՔՀԿ կոալիցիաների կարողությունները ուժեղացնելու համար:

Այս նպատակներն իրականացնելու համար աշխատանքներ են տարվում հետևյալ ուղղություններով.

Կոլիցիայի ֆինանսական միջոցների հայթայթման խմբի՝ արտաքին կապերի պատասխանատուի, հասարակայնության հետ կապերի պատասխանատուի, ծրագրի ղեկավարի, «Կոմպասս» կենտրոնի նախագահի և ծրագրի կոսորցիումի անդամ կազմակերպությունների ղեկավարների կողմից պարբերական հիմունքներով կատարվելու են ֆինանսական միջոցների հայթայթման աշխատանքներ, որոնք կարող են տարվել հետևյալ ուղղություններով.

1. *Հայաստանում և արտերկրում գործող, ինչպես նաև ոլորտում ակտիվ դոնոր, միջազգային և արտասահմանյան կազմակերպություններին՝ Ծրագրի (կոալիցիայի) համաֆինանսավորման նոր հնարավորությունների որոնման և հայտնաբերման համար,*

2. *Միացյալ Նահանգներում, Եվրոպական Միությունում, Ռուսաստանի Դաշնությունում և այլ երկրներում բնակվող հայ համայնքին՝ ֆինանսավորման նոր հնարավորությունների որոնման և հայտնաբերման համար,*

3. *Հայաստանում գործող բիզնեսի ներկայացուցիչներին՝ ֆինանսավորման նոր հնարավորությունների որոնման և հայտնաբերման համար,*

4. *ՀՀ կառավարության, կառավարության ծրագրերով նախատեսված ՔՀԿ սեկտորին տրամադրվող դրամաշնորհային հնարավորությունների օգտագործում,*

5. *ՏԻՄ բյուջեներից Ծրագրի առանձին գործողությունների համար ֆինանսավորում ստանալու հնարավորությունների օգտագործում,*

6. *Առցանց ֆինասավորման աղբյուրներ,*

7. *Այլ աղբյուրներ:*

4. Միջոցառումների և գործողությունների ծրագիր

«Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում ստեղծված «ՀամաԶարԿ» («Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման») ՔՀԿ կոալիցիա

Ֆինասական միջոցների հայթայթման միջոցառումների ու գործողությունների նախագիծ

	Միջոցառումներ	Գործողություններ	ժամկետներ	Նշումներ	Պատասխանատուներ
1.	Միջազգային և արտասահմանյան կազմակերպությունների, ինչպես նաև ոլորտում ակտիվ դոնոր կազմակերպությունների հետ հարաբերությունների հաստատում, ընդլայնում և զարգացում	Ծանոթանալ միջազգային և արտասահմանյան կազմակերպությունների ինտերնետային էջերին, նրանց ռազմավարությանը, հետաքրքրության ոլորտներին և շրջանակներին, հետաքրքրության շրջանակներում գտնվող տարածաշրջաններին և երկրներին, դրամաշնորհների հատկացման պահանջներին, ֆինանսավորվող ծրագրերի ուղղվածությանը, շահառուների որ խմբերին են սատարում, ինչպիսի կազմակերպությունների հետ են համագործակցում: Համապատասխան բովանդակությամբ համագործակցության-առաջարկ նամակների պատրաստում և ուղարկում: Անհրաժեշտության դեպքում ուղարկել նաև ծրագիր առաջարկի կոնցեպցիան կամ բուն ծրագիր առաջարկը:	2019 թ. ընթացքում		Կոլիցիայի ֆինանսական միջոցների հայթայթման խմբի՝ Ծրագրի արտաքին կապերի պատասխանատուի, հասարակայնության հետ կապերի պատասխանատուի, ծրագրի ղեկավարի, «Կոմպաաս» կենտրոնի նախագահի և ծրագրի կոսորցիումի անդամ կազմակերպությունների ղեկավարներ
2.	Դոնոր	Ծանոթանալ միջազգային և	2019 թ.		Կոլիցիայի

	կազմակերպությունների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման համար անհրաժեշտ նյութերի հավաքում	արտասահմանյան կազմակերպությունների կայքէջերին, նրանց ռազմավարությանը, հետաքրքրության ոլորտներին և շրջանակներին, հետաքրքրության շրջանակներում գտնվող տարածաշրջաններին և երկրներին, դրամաշնորհների հատկացման պահանջներին, ֆինանսավորվող ծրագրերի ուղղվածությանը, շահառուների որ խմբերին են սատարում, ինչպիսի կազմակերպությունների հետ են համագործակցում:	ապրիլ-մայիս		ֆինանսական միջոցների հայթայթման խումբ
3.	Դոնոր կազմակերպությունների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում	Ինֆրոմացիան տեսակավորել և մուտքագրել տվյալների բազայում, մշակել տվյալների բազայի տարբերակ Excel կամ այլ ծրագրի հիման վրա	2019 թ. ապրիլ-մայիս		ֆինանսական միջոցների հայթայթման խումբ
4.	Տեղական դոնոր կազմակերպությունների հետ գործնական հարաբերությունների հաստատում	Հանդիպումներ ՀՀ տարածքում գործող դոնոր կազմակերպութոյունների ներկայացուցիչների հետ, մասնակցություն նրանց կողմից կազմակերպած միջոցառումներին, համապատասխան առաջարկների ներկայացում, շփման եզրեր գտնելու գործողությունների իրականացում:	Տարվա ընթացքում		ֆինանսական միջոցների հայթայթման խումբ
5.	Մասնավոր սեկտորի հետ	Համապատասխան բովանդակությամբ	2019-2020		ֆինանսական

	հարաբերությունների ստեղծում տեղական ներդրումի ծավալի մեծացման նպատակով:	համագործակցության-առաջարկ նամակների պատրաստում և ուղարկում:	ընթացքում		միջոցների հայթայթման խումբ
6.	Դրամաշնորհային ծրագրեր կազմելու դասընթացի կազմակերպում Կոնսորցիումում/կոալիցիայում ներգրավված կազմակերպությունների շահագրգիռ անդամների համար	Կազմել դասընթացների անցկացման ժամանակացույց և ծրագիր ֆինանսավորող կազմակերպություններին ներկայացնել ՔՀԿ-ների կողմից կազմված դրամաշնորհային ծրագիր, ֆինանսավորող կազմակերպություններին ներկայացնել առնվազն երկու դրամաշնորհային ծրագիր	2019-2020 ընթացքում		ֆինանսական միջոցների հայթայթման խումբ
7.	Օգտագործել հնարավոր աղբյուրներ (գովազդ, ներքին կապեր) բիզնես կառույցների հետ համագործակցելու համար.	Գտնել բիզնես կազմակերպություն, որը կհամաձայնվի որոշակի ֆինանսական ներդրում կատարել Ծրագրում կամ այլ կերպ օժանդակել ծրագրի իրականացմանը առաջիկա երեք տարիների ընթացքում:			ֆինանսական միջոցների հայթայթման խումբ
8.	Աշխատել նոր դոնոր կազմակերպությունների հայտնաբերման	Առնվազն երկու նոր դոնորից ֆինանսավորման ստացում			ֆինանսական միջոցների հայթայթման խումբ

	ուղղությամբ.				
9.	Ֆինասավորման համար նախատեսված ծրագիր առաջարկների պատրաստում և թարգմանություն	Պատրաստել ծրագիր առաջարկներ, թարգմանել և ուղարկել համապատասխան դոնոր կազմակերպություններին կամ հայտարարված դրամաշնորհային մրցույթներին մասնակցելու համար			ֆինանսական միջոցների հայթայթման խումբ

5. Հնարավոր դոնոր կազմակերպությունների նախնական ցանկ

1.	United Nations Democracy Fund https://www.un.org/democracyfund/
2.	U.S. Department of State, Bureau of DRL https://www.grants.gov/web/grants/view-opportunity.html?oppId=299519
3.	Special Fund of the Optional Protocol to the UN Convention against Torture http://www.ohchr.org/EN/HRBodies/OPCAT/Fund/Pages/Applications.aspx
4.	The Wallace Global Fund http://wgf.org/ contact@wgf.org
5.	Sigrid Rausing Trust (UK) research@srtrust.org lucy@srtrust.org
6.	The US Embassy Democracy Commission Small Grants Program Competition Ժողովրդավարության հանձնաժողովի փոքր դրամաշնորհների ծրագրի մրցույթ (1-ին փուլ) https://armenia.usembassy.gov/demcom.html
7.	National Endowment for Democracy (NED) proposals@ned.org INFO@NED.ORG<INFO@NED.ORG>
8.	The German Marshall Fund of the United States (GMF) Project proposals must be sent to BlackSeaTrust@gmfus.org
9.	Norwegian Helsinki Committee
10.	ENI CBC Black Sea Basin Joint Operational Programme 2014-2020, 1st Call
11.	Civitas Georgica
12.	DEMAS չեխական կազմակերպություն
13.	International Society for Human Rights (ISHR)
14.	Tiri հիմնադրամ
15.	“People in Need” չեխական կազմակերպություն
16.	European Council on Refugees & Exiles (ECRE)
17.	FIDH
18.	**Ցանկը պետք է լինի շարունակական**
19.	European Endowment For Democracy: EED https://www.democracyendowment.eu/
20.	https://www.aliph-foundation.org/ international alliance for the protection of heritage in conflict areas

Օն-լայն ֆինասավորման աղբյուրներ

1.	http://www.insidephilanthropy.com/
2.	https://www2.fundsforngos.org/
3.	https://www.ihrfg.org/funder-directory-search
4.	http://www.insidephilanthropy.com/funding-for-global-security/sigrid-rausing-trust-grants-for-human-rights.html

ՀՀ-ում դոնորների վերաբերյալտեղեկատվություն տրամադրող կայքեր և պետական ֆինանսավորում ստանալու աղբյուրներ

1.	www.hkdepo.am
2.	www.civilsociety.am
3.	www.erit.am/programs
4.	www.procurement.am
5.	https://www.facebook.com/groups/NgoNews/
6.	https://www.facebook.com/groups/projectplatform/

Այս ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

**** Ցանկը լրացվելու է*

6. Ամփոփում

Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում տրամադրված ենթադրամաշնորհների շրջանակներում իրականացվող «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման

Հայաստանում» ծրագրի շրջանակներում ստեղծված «ՀամաԶարԿ» («Համայնքների զարգացման և մասնակցային կառավարմանմ») ՔՀԿ կոալիցիայի (համա)ֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանը նախատեսվում է 2019 թվականի համար, որը նախատեսվում է վերանայել չորս ամիսը մեկ անգամ: Ծրագրի համաֆինանսավորման ապահովման և ֆինանսների հայթայթման պլանի իրականացման համար անհրաժեշտ է.

- ստեղծել, վարել և պարբերաբար թարմացնել պոտենցիալ դոնորների և ֆինանսավորողների բազա՝ ներդնելով CRM համակարգ,
- ստեղծել և պարբերաբար թարմացնել ֆինանսական միջոցների հայթայթման համար անհրաժեշտ մարքետինգային գործիքներ,
- դարձնել կայուն և զարգացնել պոտենցիալ դոնորների և ֆինանսավորողների հետ հարաբերությունները (նամակագրության, հանդիպումների, հաղորդակցման ժամանակակից տեխնոլոգիաների, այդ թվում սոցիալական ցանցերի հնարավորությունների (Սքայփ, ՖԲ, Վայբեր և այլն) օգտագործման միջոցով ,
- ծրագրի շրջանակներում կազմակերպել ֆինանսական միջոցների հայթայթման հարցերով զբաղվող թիմի անդամների վերապատրաստումը,
- մշակել այլ անհրաժեշտ փաստաթղթեր, իրականացնել այլ անհրաժեշտ գործողություններ և աշխատանքներ:

7. Լրացուցիչ

1 Ֆոնդահայթայթման պլանի համար անհրաժեշտ այլ գործողություններ

1 Թվերի հաշվարկ

Ա) առաջիկա տարվա համար նախատեսվող ընդհանուր ծախսեր _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _

Բ) ծախսերի համար ապահովված գումար _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _ _

Գ) մնացած անհրաժեշտ գումար, որը պետք է հայթայթել (Ա և Բ կետերում նշված գումարների տարբերությունը)

2 Ընթացիկ տարվա ցուցանիշները և հաջորդ տարվա կանխատեսումներ[1]

ԱՂԲՅՈՒՐ	ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ Եկամուտ	ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ Ծախս	ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ Եկամուտ	ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ Ծախս	ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ Եկամուտ	ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ Ծախս
Անհատ դոնորներ						
Ընդամենը						
Անդամավճարներ						
Միջոցառումներ						
Խոշոր նվիրատվություններ						
Այլ						
Վաստակած եկամուտ						
Պետական մարմիններ						
Ընկերություններ						
Հիմնադրամներ						
Այլ աղբյուրներ						
ԸՆԴԱՄԵՆԸ						

2 Ֆոնդահայթայթման գործողությունների վերլուծություն

Վերլուծել իրականացված աշխատանքները, նշել հաջողված և չհաջողված տարբերակները: Առանձնացնել կրկնելու արժանի տարբերակները և այլն:

3 Առկա ռեսուրսների հաշվառում

Ֆինասական միջոցների հայթայթման նպատակով անհրաժեշտ է ունենալ համապատասխան մարդկային ներուժ/ռեսուրսներ և ստեղծել Ֆինասական միջոցների հայթայթման խումբ: Անհրաժեշտ է նշել այն մարդկանց, ովքեր

[1] http://www.fundraising123.org/files/KleinNP911_Fund_Plan_Worksheet.pdf

կընդգրկվեն այդ խմբում և կազմակերպության այն օղակը, որը ներկայացնում են խմբի անդամները։

Ո՞Վ	ՔԱՆԻ՞ ՀՈԳԻ	Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՆԵԼ
Խորհրդի անդամներ		
Աշխատակազմ (ներառյալ ծրագրային աշխատողները)		
Կամավորներ (ներառյալ նախկին խորհուրդը և աշխատակիցները, անդամներ, աջակիցներ)		
Այլ անձինք		

8. «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի Կոնսորցիումի անդամ կազմակերպությունների կոնտակտային տվյալներ

1. *«Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ,*
   Հասցե՝ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անկախության հիապ. 9ա շենք, 3-րդ հարկ, 1-3 սեն.,
   Հեռ.՝ (+374) 95 160 100, (+374) 77 190 895,
   Նախագահ՝ Ղարիբ Հարությունյան
   Էլ. հասցե՝ compassgyumri@gmail.com
   Վեբ կայք՝ http://compass-center.org/hy/home

2. *«ՀԿ Կենտրոն»*
   Հասցե՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Խորենացի 6/1,
   Հեռ. ՝ (+374) 322 43315 (+374) 91743315
   Նախագահ՝ Արփինե Հակոբյան
   Էլ հասցե՝ info@ngoc.amngoc.csd.ngo@gmail.com
   Վեբ կայք՝ http://ngoc.am/hy/

3. *«Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ*
   Հասցե՝ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Շահումյան 8/5,
   Հեռ.՝(+374) 60 65 15 00, (+374) 77 77 25 05
   Նախագահ՝ Արթուր Ղազարյան
   Էլ. հասցե՝ info@yccd.am
   Վեբ կայք՝ http://www.yccd.am/

4. *«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ,*
   Հասցե՝ ք.Երևան, Կոմիտաս 51, 2-րդ հարկ,
   Հեռ.՝ (010) 23-80-21, 24-64-7,
   Նախագահ՝ Գրիշա Խաչատրյան
   Էլ. Հասցե՝ isintellect@yahoo.com
   Վեբկայք՝ http://infosys.am/Pages/Home/default.aspx

Սույն ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում իրականացվող ««ՀամաԶարԿ» կոալիցիայի կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում՝ ««Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ իր գործընկերներ «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակեորպության, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպության և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համատեղ: